ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1035-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----- ---------- 2023 թվականի N ---------- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1035-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N 1369-Ն և 2007 թվականի ապրիլի 12-ի N 453-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1035-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

- Որոշման N 1 հավելվածի 28-րդ կետը լրացնել հետևյալ նախադասություններով՝ «Պրոթեզների վերանորոգման փոխհատուցման գումարի չափը սահմանված է սույն կարգի աղյուսակ 1-ում՝ նվազագույնից-առավելագույն միջակայքում, իսկ ֆունկցիոնալ պրոթեզների վերանորոգման փոխհատուցման գումարի չափը՝ սույն կարգի աղյուսակ 2-ում՝ առավելագույն արժեքով։ Ընդ որում, յուրաքանչյուր կազմակերպության հետ կնքվող պայմանագրում (համաձայնագրում) սահմանվում են վերանորոգման փոխհատուցման գումարի այն չափերը, որոնք կազմակերպությունը նախապես համաձայնեցրել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ։».
- Որոշման N 1 հավելվածի 17-րդ կետում «շարժողական» բառից հետո առաջարկվում է լրացնել «(ձգողական կամ միոպրոթեզ)» բառերը:
- Որոշման N 1 հավելվածի 26-րդ կետը լրացնել նոր 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «7) Վերին վերջույթի էլեկտրանեյրոմիոգրաֆիա հետազոտության արդյունքը՝ տրված ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան լիցենզիա ստացած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության կողմից, վերին վերջույթի միոպրոթեզով և ֆունկցիոնալ պրոթեզով պրոթեզավորման դեպքում։»:

- Որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1. կետով՝ «37.1. Եթե ՄՍԾ-ն տնօրինում է սույն կարգի 37-րդ կետով պահանջվող փաստաթղթերը կամ դրանք ՄՍԾ-ին հասանելի են համապատասխան էլեկտրոնային համակարգերի միջոցով, ապա դրանք շահառուի կամ նրա ներկայացուցչի կամ օրինական ներկայացուցչի կողմից չներկայացնելու դեպքում, լրացուցիչ չեն պահանջվում։»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։